

ԱՆՉԱՓԱՀԱՍԻ ԶԵՐԲԱԿԱՄԱՆ ԵՎ ԿԱԼԱՆԱԿՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆՈՐ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ՆԱԽԱԳԾԻ

Նելլի Աղաբաբյան

*ԵՊՀ քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի ասպիրանտ*

Քրեական դատավարության խնդիրների իրականացումը ենթադրում է դատավարական հարկադրանքի կիրառում, որովհետև քրեական վարույթի մասնավոր մասնակիցները միշտ չէ, որ պատշաճ իրականացնում են օրենքով սահմանված իրենց պարտականությունները: Ենթադրյալ հանցագործության համար ձերբակալված անձը կամ մեղադրյալը շատ հաճախ փորձում է խուսափել քրեական պատասխանատվությունից կամ խոչընդոտել գործի քննությունը: Քրեական դատավարությունում կիրառվում են այնպիսի հարկադրանքի միջոցներ, որոնք էապես սահմանափակում են անձի իրավունքներն ու ազատությունները: Ճիշտ է, դատավարական հարկադրանքի միջոցները քրեական դատավարության խնդիրների իրականացման երաշխիք են, բայց որպես դատավարության անմիջական խնդիր օրենսդիրն առանձնացնում է նաև այն, որ ոչ ոք անօրինական կամ առանց անհրաժեշտության չենթարկվի դատավարական հարկադրանքի միջոցների, պատժի, իրավունքների և ազատությունների այլ սահմանափակման (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 2, մաս 2, կետ 3): Քրեական դատավարության օրենսգրքում երկու կարևոր խնդիրների առանձնացումը վկայում է հանրային և մասնավոր շահերի փոխհարաբերակցության մասին: Հաշվի առնելով այդ շահերի հարաբերակցության կարևորությունը քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծում (այսուհետև՝ Նախագիծ) խնդիրները ստացան այլ կարգավորում. մասնավորապես ամրագրված է՝ քրեական դատավարության օրենսգրքի նպատակն է անձի իրավունքների և ազատությունների երաշխավորման վրա հիմնված՝ ենթադրյալ հանցանքների վերաբերյալ վարույթի իրականացման արդյունավետ կարգի սահմանումը: Այդ նպատակների իականացմամբ պայամանավորված՝ Նախագիծը սահմանում է անձի իրավունքները սահմանափակող դատավարական հարկադրանքի միջոցների շրջանակը և դրանց կիրառման իրավաչափությունն ապահովող երաշխիքները:

Նախագծով դատավարական հարկադրանքի միջոցները դասակարգվում են հետևյալ տեսակների՝ ձերբակալում, խափանման միջոցներ, գույքի արգելադրում, հոգեկան հիվանդություն կամ հոգեկան խանգարում ունեցող անձանց նկատմամբ կիրառվող հարկադրանքի միջոցներ և դատավարական սանկցիաներ: Ինչպես տեսնում ենք, հարկադրանքի միջոցների դասակարգման հարցում Նախագիծը էապես տարբերվում է ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքից, որում առանձնացված են դատավարական հարկադրանքի երեք տեսակ՝ ձերբակալում, խափանման միջոցներ և դատավարական հարկադրանքի այլ միջոցներ: Օրենսդրական գործող կարգավորումն անկասկած չի արտացոլում քրեական դատավարության օրենսդրությամբ նախատեսված դատավարական գործողությունների իրական էությունը: Այսպես, օրինակ՝ ոչնչով

արդարացված չէ գույքի վրա կալանք դնելը մտցնել քննչական գործողությունների համակարգի մեջ, որովհետև նշված դատավարական գործողության նպատակը ապացույցների ձեռքբերումը կամ դրանց ստուգումը չէ:

Նախագիծն առանձնանում է ոչ միայն դատավարական հարկադրանքի միջոցների ճիշտ դասակարգմամբ, այլև նոր հարկադրանքի միջոցների նախատեսմամբ և դրանց առավել մանրամասն կարգավորմամբ: Քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ, այդ թվում նաև հայրենական, բավարար ուշադրություն է դարձվել դատավարական հարկադրանքի միջոցների ուսումնասիրությանը, սակայն Նախագծի կարգավորումները պահանջում են դրանց գիտական նոր հետազոտություն: Նախագծի հիմքում ընկած է այն գաղափարախոսությունը, որ անհրաժեշտ է սահմանափակել անձին ազատությունից զրկելու դեպքերը:

Հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնահատկությունները և քրեական դատավարական հարկադրանքի միջոցների խստությունը՝ նշված գաղափարը Նախագծում ստացավ ուղղակի ամրագրում: Ողջունելի է, որ Նախագծում առանձին հոդված է նվիրված անչափահասների նկատմամբ դատավարական հարկադրանքի միջոցների կիրառմանը (Նախագծի հոդված 421), որում առանձնացված են մի քանի կարևոր դրույթներ, որոնք արժանի են ուշադրության, մասնավորապես՝ անչափահասին ազատությունից զրկելու բացառիկությունը, օրինական ներկայացուցչին այդ մասին հայտնելը, կալանքի կիրառման ժամկետների առանձնահատկությունը և այլն: Նախագծում բավականին հստակ են կարագավորված անչափահասների նկատմամբ ձերբակալման և կալանքի կիրառման առանձնահատկությունները, ինչը հնարավորություն է տալիս խուսափելու տարածական այլ մեկնաբանություններից, որոնք կարող են սահմանափակել անչափահաս անձի իրավունքներն ու օրինաչափ շահերը:

Այսպես՝ անչափահասի ազատության սահմանափակման մասին ցանկացած որոշում պետք է ընդունվի վարույթի բոլոր հանգամանքների մանրամասն քննարկումից հետո՝ սահմանափակումը հնարավորինս նվազագույնի հասցնելու նպատակով (Նախագծի 421-րդ հոդված, մաս 1-ին) : Սա այն կարևոր պահանջներից մեկն է, որը տեղ է գտել անչափահասին վերագրվող հանցանքի վարույթների վերաբերյալ միջազգային պայմանագրերում: Այս կապակցությամբ նաև պետք է ընդգծել, որ Նախագծի նշված հոդվածում արտացոլված են այն նվազագույն չափորոշիչները, որոնք ամրագրված են միջազգային պայմանագրերում, ինչպես նաև՝ անհիմն և անօրինական սահմանափակումներից անձի պաշտպանության երաշխիքները:

Ըստ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին Միջազգային դաշնագրի 10-րդ հոդվածի և Պեկինյան կանոնների 13-րդ հոդվածի՝ մինչև դատարան կալանքի տակ պահելը կիրառվում է միայն որպես ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակաընթացքի համար, կալանքի տակ պահելը հնարավորիս փոխարինվում է այլընտրանքային միջոցներով, ինչպիսիք են՝ մշտական հսկողությունը, դաստիարակչական ակտիվ աշխատանքը ընտանիքում կամ դաստիարակչական հաստատությունում կամ ուղղիչ տանը տեղավորելը, կալանքի տակ պահվող անչափահասները պետք է պահվեն մեծահասակներից առանձին:

Անչափահաս անձի նկատմամբ կարող են կիրառվել այն նույն հարկադրանքի միջոցները, ինչպես որ մեծահասակների նկատմամբ, եթե հիմքեր կան ենթադրելու, որ նրանք իրենց ոչ պատշաճ վարքագծով կարող են խոչընդոտել քրեական վարույթի իրականացումը: Նախագծով սահմանված անձին ազատությունից զրկելու հիմքերը և

պայմանները ընդհանուր են բոլորի համար, սակայն հաշվի առնելով անչափահաս անձանց տարիքային առանձնահատկությունները՝ նախատեսվում են որոշակի վերապահումներ: Աչափահասների գործերով արդարադատության նպատակը ոչ թե անչափահասի նկատմամբ դատավարական հարկադրանք կիրառելն է, այլ այլընտրաբային այնպիսի միջոցները, որոնք կարող են նրա համար ունենալ դաստիարակչական նշանակություն:

Ըստ Նախագծի 6-րդ հոդվածի 44-րդ կետի՝ ձերբակալումը առանց դատարանի որոշման Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 16-րդ հոդվածով սահմանված՝ անձի ազատության իրավունքի սահմանափակումն է: Նախագծում տեղ գտած նշված ձևակերպումը, կարծում ենք, չի արտացոլում ձերբակալման էությունը՝ որպես դատավարական հարկադրանքի ինքնուրույն միջոց: ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածում սահմանված են անձին ազատությունից զրկելու հիմքերը, իսկ ձերբակալումը որպես գործընթաց ունի իր խնդիրները, հիմքերը, պայմանները և դատավարական կարգը, որոնք բնութագրում են նրա էությունը և այն առանձնացնում դատավարական հարկադրանքի այլ միջոցներից: Ձերբակալումը անձի կողմից ենթադրյալ հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով արգելանքի տակ կարճաժամկետ պահելն է:

Ի տարբերություն ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի՝ Նախագծում առանձնացվում են ձերբակալման չորս տեսակ՝ 1) հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում, 2) ազատության մեջ գտնվող մեղադրյալին դատարան ներկայացնելու համար, 3) խափանման միջոցի պայմանները խախտած մեղադրյալի նկատմամբ, 4) վարույթի մասնավոր մասնակիցների (բացառությամբ պաշտպանի և լիազոր ներկայացուցչի), ինչպես նաև փորձագետի, թարգմանչի, վկայի՝ սույն օրենսգրքով նախատեսված պարտականությունների կատարումն ապահովելու համար (կարճաժամկետ ձերբակալում): Այդպիսի կարգավորումն արդարացված է և համապատասխանում է անձին ազատությունից զրկելու Եվրոպական կոնվենցիայով նախատեսված հիմքերին: Այն առվել որոշակի է դարձնում քրեական դատավարությունում անձին կարճաժամկետ ազատությունից զրկելու դեպքերը և օրենքով նախատեսված երաշխիքները հավասարապես կիրառում բոլորի համար:

Անչափահասի նկատմամբ կիրառվում են ձերբակալման նույն հիմքերը և պայմանները, ինչպես չափահասների: Նախագծի 109-րդ հոդվածի համաձայն՝ անձը հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում կարող է ձերբակալվել, եթե՝

1) նա բռնվել է ենթադրյալ հանցանքը կատարելիս կամ այն կատարելուց անմիջապես հետո.

2) ականատեսն ուղղակի մատնանշում է տվյալ անձին որպես քրեական օրենքով նախատեսված արարքը կատարողի.

3) տվյալ անձի կամ նրա հագուստի կամ նրա կողմից օգտագործվող այլ իրերի վրա, նրա մոտ կամ նրա բնակարանում կամ տրանսպորտային միջոցում հայտնաբերվել են քրեական օրենքով նախատեսված արարքի կատարմանը նրա առնչությունը վկայող բացահայտ հետքեր.

4) առկա են հանցանքի կատարմանը անձի առնչությունը հաստատող այլ հիմքեր, և միաժամանակ նա դեպքի վայրից կամ քրեական վարույթն իրականացնող մարմնից թաքնվելու փորձ է կատարել կամ չունի բնակության մշտական վայր կամ նրա ինքնութ-

յունը պարզված չէ:

Քրեական հետապնդման մարմինն անչափահասի ձերբակալման մասին պարտավոր է անհապաղ տեղեկացնել նրա օրինական ներկայացուցչին: Նախագծի հեղինակները, արդարացիորեն հաշվի առնելով անչափահասների տարիքային առանձնահատկությունները, ձերբակալված անչափահաս անձի համար օրենքով սահմանված իր գտնվելու վայրի մասին այլ անձանց տեղյակ պահելու իրավունքի սահմանափակում չեն կիրառում:

Նախագծից կարելի է եզրակացնել, որ անձը կարող է ձերբակալվել ցանկացած ենթադրյալ հանցագործության համար, այսինքն՝ նաև այն դեպքում, երբ տվյալ հանցագործության համար չի նախատեսվում ազատագրկում: Այդպիսի սահմանափակում նախատեսում է գործող օրենսգիրքը, ինչը, մեր կարծիքով, երաշխիք է ոչ մեծ ծանրության հանցագործություններ կատարելու համար անձին ազատությունից չզրկելու: Քրեական վարույթն իրականացնող մարմինը անչափահասի ձերբակալում իրականացնելիս միաժամանակ պետք է հաշվի առնի այն հանգամանքը, որ ձերբակալումը նպատակահարմար է, երբ ենթադրվում է, որ որպես խափանման միջոց նրա նկատմամբ կարող է կիրառվել կալանավորում: Այլ պարագայում, կարծում ենք, որ արդարացված չէ անչափահասին ազատությունից զրկելը, թեկուզ շատ կարճ ժամանակահատվածով:

Նախագծով անձը ձերբակալված է համարվում նրան ազատությունից փաստացի զրկելու պահից, իսկ օրենսգրքով սահմանված ժամկետը հաշվարկվում է այդ պահից: Վերը նշված կարագավորումը անկասկած համահունչ չէ քրեական դատավարության իրավունքի տեսության մեջ ընդունված փաստական և դատավարական ձերբակալմանը¹:

Այսպես՝ «Քրեական դատավարության օրենսգրքի 128-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ձերբակալումն անձի կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու նպատակով նրան արգելանքի վերցնելն է, հետաքննության կամ վարույթ իրականացնող մարմին բերելը, համապատասխան արձանագրություն կազմելը և այդ մասին նրան հայտարարելը՝ օրենքով որոշված վայրերում ու պայմաններում արգելանքի տակ կարճաժամկետ պահելու համար»:

Այս բնորոշումից երևում է, որ ձերբակալման ընթացակարգը բաղկացած է միմյանց հաջորդող չորս գործողություններից՝ (1) անձին ազատությունից փաստացի զրկելը, (2) նրան իրավասու մարմին բերելը, (3) ձերբակալման արձանագրություն կազմելը և (4) այդ մասին նրան հայտարարելը: Ուստի անձը կարող է ձերբակալվածի կարգավիճակ ստանալ վերջին՝ չորրորդ գործողությունը կատարելու պահից, այսինքն՝ քրեական հետապնդման մարմնում ձերբակալման արձանագրության մասին անձին հայտարարելու պահից:

Նախքան դա անձը, փաստացի արգելանքի վերցվելով և քրեական հետապնդման մարմին բերվելով, դեռևս ձերբակալվածի կարգավիճակ չի կարող ունենալ, մինչդեռ նրան արգելանքի վերցնելու և վարույթն իրականացնող մարմին բերելու հիմքը հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածն է՝ զուգորդված նրա փախուստը կանխելու նպատակով: Ընդ որում, այստեղ կասկածի հիմնավորվածության աստիճանն է՝ ի վավելի ցածր է, քան ձերբակալման դեպքում:

¹ St' u Гуткин И. М. Актуальные вопросы уголовно-процессуального задержания. М., 1980, Гуляев А. П., Данилюк С. А., Забарин С. Н. Задержание лиц подозреваемых в совершении преступления. М., Григорьев В. Н. Задержание подозреваемого, 1999:

Քրեական դատավարության գործող օրենսգրքից հետևում է, որ ձերբակալումը հնարավոր է քրեական գործ հարուցելուց հետո, մինչդեռ Նախագիծը սահմանում է ավելի երաշխավորված պաշտպանություն, այսինքն՝ անձը ձերբակալված է փաստացի արգելանքի վերցվելու պահից: Դատավարական ձերբակալումը հնարավոր է նաև մինչև քրեական վարույթ նախաձեռնելու մասին արձանագրություն կազմելը: Դրանով լուծվում է քրեական դատավարության գործող օրենսգրքով սահմանված՝ հանցագործության մեջ կասկածվող անձին բերման ենթարկելու իրավական կարգավորման հետ կապված օրենսդրության մեջ և պրակտիկայում առաջացած խնդիրները, չնայած ՀՀ վճռաբեկ դատարանը Գագիկ Միքայելյանի վերաբերյալ գործով կայացված իր նախադեպային որոշմամբ փորձեց լուծել օրենսդրության մեջ առկա բացը²:

Վճռաբեկ դատարանն արձանագրում է, որ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի հիմքով անձին ազատությունից զրկելու քրեադատավարական կառուցակարգերը չեն սահմանափակվում «ձերբակալման» և «կալանավորման» ինստիտուտներով, այլ ներառում են նաև արգելանքի վերցվելու և վարույթն իրականացնող մարմին բերվելու կառուցակարգը: Համապատասխանաբար, մինչդատական վարույթում «ձերբակալվածի» և «կալանավորվածի» կարգավիճակների հետ մեկտեղ ազատությունից զրկված անձը կարող է ունենալ նաև նախնական իրավական վիճակ, որը պայմանականորեն կարելի է անվանել «բերվածի» կարգավիճակ³:

Բերմանը հարաբերական ինքնուրույնություն տալու օրենսդրի մոտեցման մասին է վկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 180-րդ հոդվածի 2-րդ մասը, որը նախքան քրեական գործի հարուցումը թույլատրելի գործողությունների շարքում ամրագրում է նաև «հանցագործություն կատարելու կասկածանքի բավարար հիմքերի առկայության դեպքում ... բերման ... ենթարկվելը»:

Վճռաբեկ դատարանը, հիմք ընդունելով Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները, գտնում է, որ բերվածի իրավական վիճակը համապատասխանում է «քրեական մեղադրանքի» ներկայացման Կոնվենցիայի պահանջին՝ Եվրոպական դատարանի բովանդակային մեկնաբանմանը: Վճռաբեկ դատարանը, քրեական դատավարության գործող օրենսգրքի իրավական կարգավորման անկատարությունից ելնելով, որպես նախադեպ սահմանեց, որ բերվածի կարգավիճակի առանձնահատկությունները հաշվի առնելով (նախնական և կարճաժամկետ բնույթը)՝ նա պետք է օժտված լինի առնվազն հետևյալ իրավունքներով.

ա) իմանալու իրեն արգելանքի վերցնելու պատճառը (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին նախադասությունից, Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3(ա) ենթակետից),

բ) տեղեկացնելու իրեն բերման ենթարկելու մասին (բխում է ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ նախադասությունից),

գ) հրավիրելու իր փաստաբանին (բխում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասից),

դ) լռելու (բխում է ՀՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 1-ին մասից): Նշված իրավական դիրքորոշմամբ Վճռաբեկ դատարանը վերացրեց այն բացը կամ հակասությունը, որն առկա էր ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքի և Կոնվենցիայի

² Տե՛ս ՀՀ վճռաբեկ դատարանի 2009 թվականի դեկտեմբերի 18-ի՝ Գագիկ Միքայելյանի վերաբերյալ որոշումը:

³Տե՛ս նույն տեղը:

միջև:

Նախագծում տեղ գտած կարագավորումը, կարծում ենք, վերացնում է ձերբակալման երկու կառուցակարգերի միջև եղած տարբերությունը, սահմանում դրա տեսակները, ինչպես նաև դրա կիրառման իրավաչափության ընդհանուր երաշխիքները:

Անմիջականորեն ծագած կասկածի հիման վրա անչափահասի ձերբակալման դեպքում կայացվում է ձերբակալման որոշում, և կազմվում համապատասխան արձանագրություն: Այս պահանջն ընդհանուր է նաև չափահաս անձանց ձերբակալման դեպքում: Ձերբակալման այս տեսակի համար առանձին որոշում կայացնելը նորույթ է, որովհետև գործող օրենսգիրքում այն բացակայում է: Մեր կարծիքով, առկա կարգավորումը լիարժեք չէ, որովհետև ձերբակալման արձանագրությունը ոչ թե տվյալ դատավարական հարակադրանքի միջոցի կիրառման հիմքն է, այլ ամրագրում է դրա կիրառման գործընթացը:

Անչափահաս անձի ձերբակալման դեպքում վարույթն իրականացնող մարմինը նրան և նրա օրինական ներկայացուցչին անհապաղ պետք է տեղեկացնի օրենքով նախատեսված հետևյալ դատավարական իրավունքները՝

1) փաստացի ազատությունից զրկվելու պահին բանավոր, իսկ հետաքննության մարմնի կամ վարույթն իրականացնելու իրավասություն ունեցող մարմնի վարչական շենք մուտք գործելու պահին նաև գրավոր տեղեկացվել սույն հոդվածով նախատեսված նվազագույն իրավունքների և պարտականությունների մասին.

2) իմանալ իրեն ազատությունից զրկելու պատճառը.

3) պահպանել լռություն.

4) իր ընտրած անձին տեղեկացնել իր գտնվելու վայրի մասին.

5) հրավիրել փաստաբան.

6) իր պահանջով ենթարկվել բժշկական զննման (Նախագծի հոդված 110, մաս 2):

«Սահմանադրությամբ և «Քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծով սահմանված է ձերբակալման ընդհանուր ժամկետ՝ 72 ժամ: Հիմք ընդունելով ձերբակալման համար սահմանված ընդհանուր ժամկետը, միաժամանակ Նախագծում ձերբակալման առանձին տեսակների առանձնահատկություններից ելնելով՝ սահմանված են տարբեր ժամկետներ: Հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում ձերբակալվածին պետք է մեղադրանք ներկայացվի, և նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու հարցը լուծելու համար մեղադրյալը պետք է դատարան տարվի ոչ ուշ, քան ձերբակալման պահից 60 ժամվա ընթացքում: Մնացած 12 ժամը նախատեսված է դատարանում ձերբակալվածի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց ընտրելու հարցը լուծելու համար, իսկ 72 ժամը անցնելուց հետո ձերբակալված անձը ենթակա է ազատ արձակման, եթե նրա նկատմամբ չի ընտրվել կալանքը որպես խափանման միջոց:

«Հաշվի առնելով անչափահասի տարիքային առանձնահատկությունները՝ Նախագծի 421 հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հանցանք կատարած լինելու՝ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածով ձերբակալված անչափահասի նկատմամբ կալանք, տնային կալանք կամ վարչական հսկողություն կիրառելու անհրաժեշտության դեպքում նա պետք է դատարան ներկայացվի ձերբակալման պահից 48 ժամվա ընթացքում: Եթե ձերբակալված անչափահասը դատարան ներկայացնելու պահից 12 ժամվա ընթացքում դատարանի որոշմամբ չի կալանավորվում, ապա նա անհապաղ ազատ է արձակվում: «Քրեական դատավարության գործող օրենսգրքի համեմատությամբ՝ այդպիսի

կազավորումը զգալի առաջընթաց է, սակայն այն դեռևս չի բխում Պեկինյան կանոններից (10.2), որում ուղղակի սահմանված է, որ դատարանը կամ այլ իրավասու պաշտոնատար անձը կամ մարմինը անչափահասի ազատման հարցը քննարկում է անհապաղ: Անչափահաս անձանց շահերի պաշտպանությունից ելնելով՝ կարծում ենք, որ պետք է սահմանել ոչ թե 48, այլ 24 ժամ:

Անչափահաս անձանց նկատմամբ կիրառվող տարածված հարկադրանքի միջոցներից են խափանման միջոցները, որոնց կիրառման համար օրենքով սահմանված հիմքերն ու պայմանները ընդհանուր են բոլորի համար անկախ նրանց տարիքից:

Քանի որ կասկածյալը որպես դատավարության ինքնուրույն սուբյեկտ Նախագծով վերացված է, հետևաբար խափանման միջոցները կիրառվում են միայն մեղադրյալի նկատմամբ:

Ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքի կատարման մեջ մեղադրվող անչափահասի նկատմամբ կալանք կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նա խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները: Ամեն դեպքում, անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել որպես *ծայրահեղ միջոց և ամենակարճ ժամանակահատվածի համար*: Օրենսդրական նշված կարագավորումը համահունչ է անչափահասների վերաբերյալ միջազգային պայմանագրերում տեղ գտած պահանջներին:

Նախագծով անչափահաս անձանց նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառվում է այն դեպքում, երբ նրանք մեղադրվում են ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների համար, իսկ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործությունների համար՝ միայն այն դեպքում, երբ մեղադրյալը խախտել է իր նկատմամբ կիրառված այլընտրանքային խափանման միջոցի պայմանները: Այն տարբերվում է գործող օրենսգրքում տեղ գտած կարգավորումից, որովհետև քրեական դատավարության գործող օրենսգրքի համաձայն՝ անչափահաս կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կարող է կիրառվել միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է *միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքի* կատարում (ՀՀ քր. դատ. օր-ի հոդված 442): Ի տարբերություն գործող օրենսգրքի՝ Նախագիծը հնարավոր է համարում անչափահասին կալանավորել նաև ոչ մեծ ծանրության հանցագործության համար, սակայն բացառիկ դեպքում. եթե նա խախտել է իր նկատմամբ մինչ այդ կիրառված խափանման միջոցի պայմանները: Նշված բացառիկ պայմանը վերաբերում է նաև միջին ծանրության հանցագործությունների համար կալանքի կիրառմանը:

Անչափահաս անձանց նկատմամբ կալանքի կիրառման մյուս առանձնահատկությունը վերաբերում է դրա ժամկետներին, քանի որ միջազգային փաստաթղթերում սահմանված է, որ անչափահասի նկատմամբ ազատությունից զրկումը պետք է լինի հնարավորինս ամենակարճ ժամանակահատվածում: ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքում այս կապակցությամբ որևէ առանձնահատկություն նախատեսված չէ, և դատավարական գրականության մեջ հանդիպում ենք դրա արդարացի քննադատության⁴: Այստեղ հանդիպում ենք նաև հակառակ կարծիքի, որ չի կարելի անչափահասների կալանքի ժամկետները սահմանափակել: Նշված հեղինակները գտնում են, որ կա-

⁴ Տե՛ս **Николюк В. В.** Уголовный процесс по делам несовершеннолетних: Лекция.- Омск: Юридический институт МВД России, 1998, էջ 47, **Авдеев В. Н.** Процессуальные сроки содержания под стражей на стадии предварительного расследования. Калининград. 1999, էջ 56-57:

լանքի տակ պահելու ժամկետները պետք է կախված լինեն գործի հանգամանքներից, այդ թվում՝ գործի բարդությունից և ոչ թե մեղադրյալի տարիքից: Բացի դրանից, անչափահասների վերաբեյալ քրեական գործերով ապացուցման ենթակա հանգամանքները շատ են, և դրանց ապացուցման համար պահանջվում է ավելի երկար ժամանակ⁵:

Այդպիսի մոտեցման հետ անկասկած դժվար է համաձայնել, որովհետև չափահասների և անչափահասների համար անազատության մեջ մնալու միևնույն ժամկետը չի բխում անչափահասների գործերով արդարադատության նպատակներից: Անչափահաս անձին երկար ժամանակ անազատության մեջ պահելը նրա համար կարող է հոգեկան ծանր ապրումներ առաջացնել: Կալանքը որպես խափանման միջոց ոչ միայն պետք է կիրառել ծայրահեղ դեպքում, այլև ամենակարճ ժամանակահատվածի համար: Իրականում չի կարող անչափահաս և չափահաս մեղադրյալների համար սահմանվել կալանավորման միևնույն ժամկետները:

Այս գաղափարախոսությունն արտացոլված է Նախագծում, որի 421-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի կամ տնային կալանքի տևողությունը յուրաքանչյուր դեպքում չի կարող գերազանցել մեկ ամիսը: Մինչդատական վարույթում անչափահասի նկատմամբ կիրառված կալանքի ընդհանուր տևողությունը չի կարող գերազանցել՝

1) երկու ամիսը՝ ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործության համար մեղադրվելու դեպքում.

2) վեց ամիսը՝ ծանր կամ առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվելու դեպքում:

Առանձնապես ծանր հանցագործության համար մեղադրվող անչափահասի նկատմամբ կիրառվող կալանքը բացառիկ դեպքերում կարող է երկարացվել ևս առավելագույնը երկու ամսով:

Ղատավարական գրականության մեջ բազմիցս առաջարկվել է անչափահասների նկատմամբ խափանման միջոցներ ընտրելիս հաշվի առնել հանցագործության ծանրության աստիճանը, վարույթն իրականացնող մարմնից նրա թաքնվելու կամ գործի քննությունը խոչընդոտելու հնարավորությունները, ինչպես նաև տվյալ անձի նկատմամբ կիրառվող խափանման միջոցի արդյունավետությունը: Պետք է ի նկատի ունենալ, որ ամենակարճ ժամանակահատվածում էլ անազատության մեջ անչափահասի գտնվելը նրա հոգեկան վիճակի վրա կարող է ունենալ բացասական ազդեցություն⁶: Անչափահասի նկատմամբ կալանք կիրառելիս դատարանը պետք է հաշվի առնի նրա դաստիարակության պայմանները, ինչպես նաև ծնողների հետ ունեցած հարաբերությունները:

Նախագիծը, չբացառելով անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու հնարավորությունը, միաժամանակ ամրագրում է հետևյալը, որ ամեն դեպքում անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը կարող է կիրառվել որպես ծայրահեղ միջոց: Այդպիսի կարգավորումը ինչպես քրեական հետապնդման մարմնին, այնպես էլ դատարանին պարտավորեցնում է կալանքը կիրառել միայն ծայրահեղ դեպքերում, երբ բացառվում է այլընտրանքային որևէ խափանման միջոցի կիրառումը: Իհարկե Նախագծից չի երևում, թե ինչ պետք է հասկանալ «ծայրահեղ» ասելով, կամ որ հանգամանքներն են, որոնք պետք է հաշվի առնել կալանք կիրառելիս: Ելնելով դա-

⁵ Տե՛ս **Авалиани К. А.** Особенности досудебного производства по уголовным делам в отношении несовершеннолетних, Дисс. канд. юрид. наук. Кемерово, 2009г., էջ 123:

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 115:

տական պրակտիկայի ուսումնասիրությունից՝ կարծում ենք, որ պետք է հաշվի առնել հետևյալ հանգամանքները՝ անչափահասի կողմից նախկինում հանցանք կատարած լինելը, քրեական պատասխանատվության ենթարկվելը, մի քանի հանցագործություն կատարելը, նրա ագրեսիվ վարքագիծը հանցագործություն կատարելիս կամ դրանից հետո և այլն: Դատավարական գրականության մեջ նման հիմքեր առանձնացվել են այլ գիտնականների կողմից. այսպես, Ֆ. Բագաուտինովը առանձնացնում է անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելու բացառիկությունը հաստատող հետևյալ հանգամանքները՝ նախկինում անչափահասի կողմից հանցագործություն կատարելը, երկու կամ ավելի հանցագործության կատարումը, անչափահասի անձնական հատկանիշներից ելնելով՝ նրան հասարակությունից մեկուսացնելը (չտվորելը, չաշխատելը, ոստիկանությունում հաշվառման մեջ գտնվելը, թմրանյութեր օգտագործելը և այլն)⁷:

Անչափահասի նկատմամբ կալանքը որպես խափանման միջոց կիրառելիս պետք է առկա լինեն քրեական դատավարության օրենսգրքով սահմանված խափանման միջոցների կիրառման հիմքերը /Նախագծի հոդված 116/, բայց միաժամանակ այդ հիմքերի հետ միասին անպայման պետք է հաշվի առնել նաև անպիսի հանգամանքեր, որոնք էական նշանակություն ունեն անձին ազատությունից զրկելու հարցը որոշելու համար: Այս տեսանկյունից պետք է համաձայնել դատավարական գրականության մեջ տեղ գտած հետևյալ մոտեցման հետ, որ անչափահասի նկատմամբ խափանման միջոցի ճիշտ ընտրության համար պետք է հաշվի առնել այնպիսի հանգամանքներ, որոնք թեև քրեական դատավարության նպատակներից դուրս են, բայց ունեն կրիմինոլոգիական մեծ նշանակություն՝

- հանցավոր վարքագծի մոտիվացիան,
- անչափահասի դերը հանցագործության կատարման մեջ,
- հանցագործության կատարման պատճառները և պայմանները,
- անչափահասի կյանքի և դաստիարակության պայմանները,
- անչափահասի մտավոր զարգացվածությունը և դաստիարակությունը,
- անչափահասի վարքագիծը մինչև հանցագործություն կատարելը և դրանից հետո,
- անչափահասի վարքագիծը քննության ընթացքում⁸:

Անչափահասի իրավունքների պաշտպանությունից ելնելով՝ Նախագծում ուղղակի սահմանված է, որ անչափահասի ձերբակալման, կալանավորման կամ կալանքի ժամկետը երկարացնելու մասին անհապաղ տեղեկացվում է նրա օրինական ներկայացուցիչին: Այս հանգամանքը նշանակում է, որ կալանքի հարցը քննարկելիս պետք է ապահովել նաև օրինական ներկայացուցչի մասնակցությունը, քանի որ մինչև կալանքին անդրադառնալը բոլոր դեպքերում պետք է քննության առարկա դարձնել ծնողների հսկողությանը հանձնելու հարցը:

Կարող ենք փաստել, որ մինչ այժմ Հայաստանի Հանրապետությունում չկա «յուլենալ արդարադատություն», իսկ Նախագծում տեղ գտած կարգավորումները կարող են խթանել մեր երկրում «յուլենալ արդարադատության» զարգացումը:

⁷ St' u Багаутинов Ф. Ювенальная юстиция начинается с предварительного следствия //Российская юстиция. 2002, N 9., էջ 44:

⁸ St' u Трунов И. Л., Трунова Л. К. Меры пресечения в уголовном процессе, СПб.: Изд. «Юридический центр Пресс», 2003, էջ 235:

FEATURES OF THE JUVENILES' ARREST AND DETENTION AS PROVIDED BY THE DRAFT OF THE NEW CRIMINAL PROCEDURE CODE OF THE REPUBLIC OF ARMENIA

Nelli Aghababyan

*PhD student of the Chair of Criminal
Proceedings and Criminalistics YSU*

The draft of the new Criminal Procedure Code pays much attention to the issues of juvenile justice that are important in the criminal proceedings for the protection of the minors' rights and legitimate interests.

This article analyzes the 421st article of the Draft, which is associated with the legal settlement of the minor's arrest and detention. Several important provisions are marked out in the article, which are to be mentioned about, in particular about the exclusivity of imprisonment of minors, informing the legal representative about it, the features of terms of arrest application, etc.

The project quite clearly defines the features of the application of arrest and detention towards the juveniles, thus avoiding other spatial interpretations that may restrict the minors' rights and interests.

We should mention that the Project settlement regarding both the use of coercive measures towards the juveniles and many other issues may contribute to the development of "juvenile justice" in our country.

ОСОБЕННОСТИ АРЕСТА И ЗАДЕРЖАНИЯ НЕСОВЕРШЕННОЛЕТНИХ СОГЛАСНО ПРОЕКТУ НОВОГО УГОЛОВНО-ПРОЦЕССУАЛЬНОГО КОДЕКСА РА

Нелли Агабабян

*Аспирант Кафедры уголовного
производства и криминалистики ЕГУ*

В проекте нового уголовно-процессуального кодекса достаточно внимания уделено вопросам ювенальной юстиции, которые важны для защиты прав и законных интересов несовершеннолетних в уголовном производстве.

В рамках данной статьи анализирована 421-ая статья Проекта, которая связана с правовым урегулированием ареста и задержания несовершеннолетнего лица. В указанной статье отмечены несколько важных достойных внимания положений, в частности об исключительности лишения свободы несовершеннолетних, о сообщении законному представителю об этом, особенности сроков применения ареста и т.д.

В проекте достаточно четко сформулированы особенности применения ареста и содержания под стражей несовершеннолетних, что позволяет избегать других пространственных интерпретаций, которые могут ограничить права и законные интересы несовершеннолетних.

Можем отметить, что приведенные в Проекте урегулирования как по применению мер принуждения, так и по другим вопросам, могут способствовать развитию “ювенальной юстиции” в нашей стране.

Բանալի բառեր – անչափահաս, ձերբակալում, ձերբակալված, կալանք, հարկադրանքի միջոց

Keywords: juvenile, arrest, arrested, detention, coercive means

Ключевые слова: несовершеннолетний, арест, арестованный, содержание под стражей, принудительные средства